

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԱՊՐՈՑ ԶԵԼԵՊԻՏԻ ՏՈՂԱԾԱՆՈՐ

Յ. ԲԻԼՐՈՒՆԻ «ԲաղմաՎէպ», 1925 Սեպտեմբեր եւ 1926 Փետրուար ամիսներու թիւերուն մէջ ունի յօդուած մը՝ «Նիւթեր Պաշտօնական պատմութեան համար. Ապրիլ 2էլէպի» խորագրով, ուր չափազանց պակասաւոր կու տայ Ապրիլ 2էլէպի տոհմածառն իր ճիշդաւորութիւնը: Այս պատճառով հարկ կը համարիմ զայն ներկայացնելու իշխանի Հայոց առաջնորդարանի յիշատակարանին համեմատ, որ կը գտնուի մեր Մատենադարանին թ. 730 շեռագրին մէջ (թղ. 70 ա—72բ) եւ որ հրատարակուած է (մաս մը) Սիմոն Գաբամաճեանի Տարեցոյցին մէջ 1923ին (էջ 94) եւ ծանօթ է Բիւրտեանի:

Արդ այս յիշատակարանին համաձայն՝ Աստուածատուր կ'ունենայ երկու որդի Ալիիար եւ Ասլան, վերջինս կ'ունենայ երկու որդի՝ Աստուածատուր եւ Նաղուպ «որք սերեալ ցերկորդ ծնունդս լուին», իսկ Ալիիարի կ'ըլլան չորս զաւակ՝ երկու մանչ՝ Մուրատխան եւ Յովնանէս եւ երկու աղջիկ՝ Կիւլզատէ եւ Մարիամ: Մուրատխան կ'ունենայ հինգ զաւակ Աբրահամ կամ Ապրոյ, Պետրոս, Աննա, Թագունի եւ Մարիամ: Աբրահամ կը տեսնէ չորս զաւակ՝ Մագսուտ, Մատթէոս, Մուրատխան եւ Սաուա: Ասոնցմէ Մատթէոսին կը տերին ութ ժառանգ, որոնց չորսին անունը յիշատակարանին մէջ չկայ, միւս չորսն են՝ Աբրահամ, Պետրոս, Ստեփանոս եւ Կիւլզան: Երեք եղբայրները կ'ունենան զաւակներ՝ Աբրահամ չորս մանչ՝ Մատթէոս, Ռափայէլ, Սէթ եւ Յովնանէս եւ երկու աղջիկ Գալիանէ ու

¹ Հմմտ. նաեւ «Բիւզանդիոն» 1909, թ. 3891, ուր յիշատակարանի մը մէջ կայ՝ «Հօրն (Ապրոյի) Պելկրատցի մահտեի խօսքա Մուրատխանին եւ մօրն Եահրեանին, պապուն խօսքա Ալիիարին եւ եղբօրն Պետրոս 2էլէպոյի՝ Տեսանի գեռ քանի մը ուրիշ Ապրոյեաններ:

Թագունի. Պետրոս՝ չորս ուստր՝ Աստուածատուր, Գալուստ, Առաքել եւ Մարգար եւ երկու դուստր Սաուա եւ Մարթա, Ստեփանոս՝ հինգ որդի՝ Բարդուղիմէոս, Յակովբ, Յարութիւն, Սրբունի եւ Բրաքիոն: Պետրոսի որդին Աստուածատուր կ'ունենայ տասնութեք տղայ՝ Ալիիար, Մարգար Մատթէոս, Պետրոս, դարձեալ Ալիիար, Պետրոս, Յակովբ եւ երկու Գալուստ, Մարիամ, Սրբունի, Իսկունի, դարձեալ Սրբունի: Առաքել վեց՝ Գալուստ, Աբրահամ, Սէթ, Կիւլզան, Մէնէնտ եւ Աննա: Աստուածատուրին որդին Մարգար կ'ունենայ երեք զաւակ՝ Աստուածատուր, Գալիէլ, Տիրունի: Իգական սեռէ՝ Պետրոսի աղջիկը Սաուա կ'ունենայ երկու տղայ՝ Յարութիւն եւ Ժաղիկ, Մարթա՝ երեք՝ Պօղոս, Պետրոս եւ Նազարու: Աստուածատուրի (որդի Պետրոսի) աղջիկը՝ Մարիամ կ'ունենայ երեք դուստր՝ Մարգարիտ, Կիւլզատուն եւ Թագունի:

Այսչափն իշխանի յիշատակարանին համեմատ, Աբրահամ Գ.ի Բիւրտեան երկու զաւակ յիշած է՝ Պետրոս եւ Ռափայէլ, մինչ նա չորս տղայ ունէր՝ Պետրոս, Ռափայէլ, Առաքել եւ Մարիամ (Հմմտ. «Մասեաց Աղաւնի», 1857, էջ 231): Տիգրան փաշային († 1904, Յուլ. 29) մօրն անունը Աղաղարմ կը յիշէ Իմմա Սիարքէս եւ անոր մէկ եղբայրը՝ Ասլան (Հմմտ. Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գաֆուրէ 1911, էջ 50—57):

Բիւրտեանի գծած տոհմածառին մէջ կան նաեւ թուականներու սխալներ, որոնցմէ յիշեց միայն քանի մը հատ: Աբրահամ Բ.ի համար նշանակուած է թէ՛ մեռած է 1688ին, իսկ անոր թողը Առաքել 1875ին, մինչ ասոնց միջնորդը կը կազմէ Ստեփան Ա. Ապրիլ, հայր վերջինս եւ որդի առաջնոյն: Աստուածատուրի Ա.ի ծնած 1763ին՝ կը լինէ Ալիիար անուն որդի մը, որ 1767ին կը յիշուի: Աբրահամ Գ.ին Պետրոս որդւոյն մահը կը դրուի 1855ին մինչ մեռած է 1857ին (Հմմտ. Մասեաց Աղաւնի 1857, էջ 142):

Այս անգամ այսքան:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՈՒՂՂԵԼԻՔ

«Հանգէս Ամսօրեայ», էջ 51, 53, 55 «Տէր Մկրտչեան» կարգալ՝ «Տէր-Մովսէսեան» եւ էջ 285 (տող 21) «անկախութեան» «առկախութեան»:

ՎԻԵՆՆԱ, ՄԻԼԵՐԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

